338.1
Z-21.

2 802-1 Ո

Պրոլետարներ բոլոր յերիրների, միացե՛ք

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՅԵՎ

ՓԱՂՀԱՆԻ,
ՄՇԱԿՄԱՆ,
ԲԵՐԲԱՀԱՎԱՔԻ
ՈՒՄԹԵՐՄԱՆ

ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄ Կ(Բ)Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ
ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԳՅՈՒՂՇՐՍՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ

338.1
Հ-21.

18 SEP 2013
29864
338.1
Հ-21
1006/29513
3119

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՔԱՂՀԱՆԻ, ՄՅԱԿՄԱՆ, ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՈՒ ՄԹԵՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄ Կ (Բ) Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Անդրկովկասի կուսկազմակերպությունները 1934 թվի գարնանացանն ավելի հաջող ու կազմակերպված կատարեցին, քան անցյալ տարի։ Մինչև մայիսի 25-ը բոլոր դարնանային մշակույթների ցանքի պլանն Անդրկովկասում կատարվեց 95,5 տոկոսով, այդ թվում հացաբույսերի ցանքի պլանը՝ 98,7 տոկոսով, բամբակի ցանքի պլանը՝ 100,4 տոկոսով, բանջարեղենի ցանքի պլանը՝ 76,9 տոկոսով, կերաբույսերի ցանքի պլանը՝ 84,4 տոկոսով։ Կատարվեց թեյի պլանտացիաներ տնկելու, նորոգելու և վերականգնելու պլանը, խաղողի այգիներ, մրգատու պարտեզներ և ցիտրուսային մշակույթներ տնկելու պլանները։

Մեքենատրակտորային կայանների սպասարկած և քաղբաժինների ղեկավարած կոլտնտեսություններն առաջին շարքերում էին ընթանում, ցանքի թե նախապատրաստման և թե կատարման բոլոր ցուցանիշներով։

Դրա հետ միասին, Համ Կ (բ) Կ-ի Անդրյերկոմի պլենումը մատնանշում է, որ մի շարք շրջաններում, խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում, մանավանդ անհատական տնտեսություններում, ցանքը կատարված է ցածր վորակով (ծանծաղ հերկ, վատ ցաքանում, անկանոն ցանք, չախտահանված սերմացվով ցանելը և այլն)։ Նմանապես ձգձգվել են մի քանի մշակույթների ցանքի ժամկետները (յեգիպտացորեն, յեգիպտական բամբակ) և թե թիրակատարվել է մրգատու պարտեզների նորոգման պլանը։

Պլենումը շեշտում է, որ 1934 թ. բարձր բերքի համար մղվող պայքարի հաջողությունն ուղղակի կախված է քաղհանի ու մշակման աշխատանքը և բերքահավաքը ճիշտ և

ժամանակին կատարելուց։ Ցանքի ժամանակ դադարություն ունեցող ագրոտեխնիկ թերությունները պետք է ուղղվեն ցանքերի հետագա կանոնավոր խնամքով։

Մշակումը, քաղհանը, բերքահավաքը և մթերումը հաջող կատարելու համար, պլենումն առաջարկում է.

1. Կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում աշխատանքը ճիշտ կազմակերպելու, աշխատանքային կարգապահության հետագա ամրացման և բոլոր աշխատունակների դաշտ դուրս գալն ապահովելու համար, ստուգել ու ամրացնել կոլտնտեսական ամեն մի բրիգադի և ողակի աշխատանքը, թույլ չտալ, որ խախտվեն բրիգադներին ամրացված արտադրական մասերը, բրիգադների մեջ ողակներին ամրացնել դաշտամասերը՝ քաղհանի ու մշակման աշխատանքների ընթացքում։ Վրճռաբար պայքար մղել բրիգադիրների և ողակավարների դիմադրվման դեմ, որը նկատվում է մի շարք շրջաններում ու կոլտնտեսություններում։ Բոլոր կոլտնտեսություններում ու բրիգադներում կազմակերպել յերեխաների խնամքը (մանկամսուրներ, յերեխաների խնամքը դաշտակայաններում և այլն)։ Դաշտակայաններն ապահովել խմելու ջրով, կազմակերպել կոլեկտիվ սնունդ (ճաշ, թեյ)՝ կոլտնտեսականների մթերքներից։

2. Խորհտնտեսություններում, մանավանդ բամբակագործական, թեյաբուծական, մրգաբուծական, խաղողաբուծական և սերմնաբուծական խորհտնտեսություններում, ժամանակին կազմակերպել սեզոնային բանուժի ընդունումն ու սպասարկումը (բընակարան, սնունդ, կուլտսպասարկում), մասսայական-քաղաքական աշխատանք ծավալելով խորհտնտեսությունների սեզոնային բանվորների մեջ, սահմանելով խիստ կարգապահություն և աշխատանքի բարձր արտադրականություն։

3. Ստուգել, թե խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների, մեքենատրակտորային կայանների ու մենատնտեսների մշակման ու բերքահավաքի ինվենտարն ինչ չափով և պատրաստ աշխատանքի (մեքենայացված, ձիաքարշ ու ձեռքի գործիքները, առանձնապես ստուգել, թե ինչ չափով պատրաստ են բերքահավաքին կոմբայնները), սահմանված ժամկետներում ավարտել ինվենտարի նորոգումը և կազմակերպել ինվենտարի դաշտային ընթացիկ նորոգումը աշխատանքի ընթացքում (շարժական արհեստանոցներ, դարբնոցներ)։

4. Կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում

առանձնացնել հյուծված և անաշխատունակ լծկաններին, լիովին ազատելով նրանց բոլոր աշխատանքներից, կազմակերպել նրանց արածումը գիշեր-ցերեկ, դիրացնել և պատրաստել նրանց մշակման ու բերքահավաքի աշխատանքին։

5. Կազմակերպել հասարակական և պետական (շրջանային հողային բաժինների) վերահսկողությունը մշակման ու բերքահավաքի աշխատանքների կատարման վորակի վրա։ Թույլ չտալ, վոր կոլտնտեսությունների նախագահները կոլտնտեսականներից ու բրիգադիրներից աշխատանքն ընդունեն մինչև վոր նրանք կատարելապես չուղղեն հայտարերված թերությունները։

6. Մատնանշելով գյուղատնտեսական ՁԱՍ-ների դեմ մղվող պայքարի թուլանալը, հողային որգանների անպատրաստ լինելը (Հողժողկոմատ, շրջանային հողբաժիններ, մեքենատրակտորային կայաններ) ՁԱՍ-ների դեմ պայքար մղելու և մշակույթների բուժումը կազմակերպելու ասպարիզում, առաջարկել կուսակցության շրջկոմներին, մեքենատրակտորային կայանների ու խորհտնտեսությունների քաղբաժիններին հատուկ հսկողության տակ առնել այդ աշխատանքը, պարտավորեցնելով շրջանային հողբաժիններին, մեքենատրակտորային կայաններին, գյուղխորհուրդներին և կոլտնտեսությունների վարչություններին, կազմակերպել ՁԱՍ-ների դեմ պայքարելու ձեռնարկումների գործադրումը (թույների ու ապարատների ստանալն ու բաշխումը, աշխատողների հրահանգումն ու պատրաստումը)։

Հատուկ ուշադրություն նվիրել գյուղատնտեսության վնասատուների դեմ մեխանիկական յեղանակով պայքարելու գործին, ինչպես և վնասատուներին ձեռքով հավաքելուն։

7. Բամբակի, լյուցերնի, ճակնդեղի և այլ մշակույթների ցանքերը վոռոգումով ապահովելու նպատակով, խիստ հսկողություն սահմանել վոռոգիչ ցանցի ու ջրհանների վրա և մտցնել գիշեր-ցերեկ վոռոգելու պրակտիկա, համաձայն այն պահանջներին, վորոնք ներկայացնում է բամբակը վոռոգման նկատմամբ, խնայողաբար մսխելով ջուրը, թույլ չտալով, վոր ցանքերը չորանան կամ ճահճակալեն։ Միջոցներ ձեռք առնել ճիշտ կազմակերպելու վոռոգողների աշխատանքը, համապատասխան դարձնելով նրանց աշխատանքի վարձատրությունը աշխատանքի վորակին։

8. Պլենումն առաջարկում է շրջանային կուսակցական, խորհրդային և հողային կազմակերպություններին՝ իրականացնել

հետևյալ հիմնական ձեռնարկումները կարևորագույն գյուղատնտեսական մշակույթների մշակման և բերքահավաքի նախապատրաստման ասպարիզում։

ԲԱՄԲԱԿԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ.—

Պարտադիր կարգով կատարել յերկու նոսրացում, չորս քաղհան, չորս կուլտիվացիա, անհրաժեշտ թվով վոռոդում, ապահովելով կատարվող աշխատանքի բարձր վորակը։

Քաղհանը և կուլտիվացիան կատարել հետևյալ ժամկետներին՝ առաջին քաղհանը և առաջին կուլտիվացիան մայիսի 10-ից մինչև հունիսի 5-ը, յերկրորդը՝ մայիսի 25-ից մինչև հունիսի 15-ը, յերրորդը՝ հունիսի 16-ից մինչև հուլիսի 5-ը, չորրորդը՝ հուլիսի վեցից մինչև հուլիսի 25-ը։

Գոմոզայով վարակված ցանքերի նոսրացումը հետաձգել տասն որով։

Ադրբեջանում հատուկ ուշադրություն նվիրել բամբակը մշակելիս քետմենների արմատացմանն ու կիրառմանը։ Տրակտորային կուլտիվացիայի յենթարկել 30 հազար հեկտար բամբակ և պայքար մղել բամբակի ֆնասատուների դեմ, ամբողջ վարակված տարածության վրա։ Սիստեմատիկ վերահսկողություն սահմանել բամբակի սերմացվի համար առանձնացված ցանքերի վիճակի ու մշակման վրա։

Միջոցներ ձեռք առնել, վոր բամբակի առաջիկա բերքահավաքի բոլոր նախապատրաստական աշխատանքները ժամանակին կատարվեն (տուրման-վակուումների ու տրակտորների նորոգումը, շանգիստների ու մեխանիկների նախապատրաստումը և այլն), ապահովել բանուժի ամրացումը քոչ գնացող վայրերում։

ԹԵՑԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ.—

Անհապաղ վերացնել թեյատերև հավաքելու ու փոցխելու ասպարիզում գոյություն ունեցող թերությունները և ամենուրեք վճռաբար արմատացնել թեյատերևի անընդհատ հավաքումը։ Ապահովել թեյատերև հավաքելու, փոցխելու և քաղհանելու պլանների լրիվ կատարումը։

Փոցխումը կատարել հետևյալ ժամկետներին, առաջինը՝ մայիսի մեկից մինչև հունիսի մեկը, յերկրորդը՝ հունիսի մեկից մինչև հուլիսի մեկը, յերրորդը՝ հուլիսի մեկից մինչև ոգոստոսի մեկը, չորրորդը՝ ոգոստոսի մեկից մինչև սեպտեմբերի մեկը, հինգերորդը՝ ոգոստոսի քսանից մինչև սեպտեմբերի 20-ը։

Առաջին քաղհանը կատարել մայիսի մեկից մինչև հունիսի 10-ը, յերկրորդը՝ հուլիսի մեկից մինչև ոգոստոսի մեկը, յերրորդը՝ ոգոստոսի մեկից մինչև սեպտեմբերի 10-ը։

Ամենաուշը մինչև հունիսի 5-ն ավարտել թեյի գործարանների կառուցվող չորացնող ցեխերի սարքավորումը և մինչև հունիսի 10-ը՝ տեսակավորող ցեխերի սարքավորումը։

Անհապաղ ստուգել թեյատերև ընդունողների աշխատանքն ու անձնակազմը, համալրելով բոլոր ընդունման կետերն ստուգված ու վորակյալ ընդունողներով։

Ամենաուշը մինչև հուլիսի տասն ավարտել դեպի ընդունման կետեր տանող ճանապարհների ու կամուրջների նորոգումը, անհրաժեշտ պայմաններ ստեղծելով թեյատերևն անխափան կերպով ավտոներով փոխադրելու համար։

ՑԻՏՐՈՒՍՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ.—

Սահմանված ժամկետներին իրագործել պլանտացիաների ամառվա ու աշնան խնամքի բոլոր ձեռնարկումները՝ չորս անգամ փոցխել, շարամեջ տարածությունները հնձել, յերկրորդ բուժումը կատարել հունիսի 20-ից մինչև հուլիսի 10-ը, յերրորդ բուժումը կատարել ոգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը և պարարտացնել հանքային պարարտանյութերով։ Տնկարանները փոցխել 8 անգամ, քաղհանել, յերկու նվագ բուժել (մայիսի մեկին և հուլիսի մեկին), յերկու-յերեք անգամ հեղուկ աղբ թափել։

Հատուկ ուշադրություն նվիրել տնկարաններին, նրանց խնամքին և տնկելու նյութի արտադրմանը։ Ցեռատերևի կանաչ վերատնկումը կատարել մայիսի 20-ից մինչև հուլիսի մեկը։ Ստուգել պատվաստելու մայր տունկերը ցիտրուսների պատվաստման կամպանիայի համար, հունիսի 15-ից մինչև հուլիսի 15-ը պատրաստել պատվաստողների անհրաժեշտ կադր։ Ամառը պատվաստել 1.190 հազար վայրի ցիտրուս, վորոնցից մանդարին՝ 883 հազար հատ, լիմոն՝ 217 հազար հատ, նարինջ՝ 70 հազար հատ, գրեյֆրուտ՝ 20 հազար հատ։

Ստուգել ներմուծվող նյութի վորակը, ապահովելով նրա համապատասխան խնամքը։

ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Ծխախոտ տնկելը և փչացած՝ փոխարեն լրացուցիչ շիթիլ տնկելն ավարտել սահմանված ժամկետներին (հունիսի 10-ից մինչև 15-ը)։ Գործադրել ծխախոտի բերքատվության բարձրացման բոլոր ագրոձեռնարկումները՝ ետելը, ծաղիկների կարելը, քաղհանը՝ առաջինը տնկելուց 8—10 որից հետո, յերկրորդ քաղհանը՝ առաջինից յերկու շաբաթ հետո և յերրորդ քաղհանը՝ խոտակալած հողամասերում, ինչպես և վոռոգումը, վոռոգելի ծխախոտագործության շրջաններում։

Հատուկ ուշադրություն նվիրել ծխախոտի բերքահավաքի նախապատրաստական աշխատանքին, ժամանակին ապահովելով շրջանները ծխախոտի տերևները շարելու թելով։

Ծխախոտի նոր չորանոցների կառուցումը և գոյություն ունեցող չորանոցների ու ֆերմենտացիոն գործարանների նորոգումն ավարտել ամենաուշը մինչև հուլիսի մեկը։

ՀԱՑԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Բոլոր շրջաններում կատարել խոտակալած ցանքերի պարտադիր քաղհանը ձեռքով և գարնանացան հասկավոր ցանքերինը՝ ցողունավորվելուց առաջ։ Առնվազն յերկու անգամ փոցխել յեգիպտացորենը և բուկ տալ։ Հացահատիկայինների բերքահավաքն ավարտել՝ ցորենը 8—10 որում, վարսակի և գարու բերքահավաքը՝ 10—12 որում։ Փափուկ ցորենի թափվող տեսակների բերքահավաքն սկսել մոմային հասունության ստիճանում։ Ամենուրեք մոցնել հասկերը ձեռքով հավաքելը, կապելն ու դիզելը կալում, սիստեմատիկ վերահսկողություն հաստատել կալսիչների աշխատանքի վրա և սխտահանել շտեմարանները։

Կազմակերպել դաշտերի, կալերի և շտեմարանների պահպանումը գողություններից ու հրդեհներից, ներգրավելով այդ գործին կոմերիտական ու պիոներական կազմակերպությունները (պահակներ, պոստեր)։ Խոտի հնձումն ամենուրեք ավարտել նախքան այդ շրջաններում հացաբույսերի բերքահավաքն սկսվելը։

Առաջին հերթին պետությանը հացահատիկ հանձնելու պարտականությունը կատարելուց հետո, ապահովել սերմացվի ու ապահովագրական ֆոնդերի ժամանակին ստեղծումը՝ 1934 թ. աշնանացանի և 1935 թվի գարնանացանի համար։

ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Առանձնացնել անցյալ տարիների լյուցերնի ցանքի տարածություններից լավագույն 1900 հեկտար և, դաշտում ստուգելուց հետո, թողնել այդ ցանքերը վորպես սերմացու, պահպանելով անասուններից, թույլ չտալով հնձել խոտի համար։

Ավարտել նաև բոլոր սերմացուների ցանքերի դաշտային ստուգումը։ Զանազան կատեգորիաներին ու տեսակներին պատկանող ցանքերի բերքահավաքը կատարել առանձին-առանձին՝ թույլ չտալով, վոր դրանք, բերքը հավաքելու և պահելու ժամանակ, խառնվեն այլ սերմերի հետ։ Հացաբույսերի բերքահավաքի ժամանակ առանձնացնել լավագույն ցանքերը սերմացվի համար։

9. Պլենումը մատնանշում է, վոր չնայած մեքենատրակտորային կայանները հաջողությամբ են կատարում իրենց արտադրական խնդիրները, այնուամենայնիվ նրանց մեծ մասում մինչև այժմ ել կան խոշորագույն թերություններ՝ անբավարար է տրակտորների և գյուղատնտեսական այլ մեքենաների խնամքն ու տեխնիկական հսկողությունը, ցածր է նորոգման, մանավանդ ընթացիկ նորոգման վորակը, ամենուրեք տեղի յե ունենում վառելանյութի գերամսխում, թույլ է կազմակերպված կոլտնտեսությունների ագրոարտադրական սպասարկումը, վորի շնորհիվ շատ ծանր է մեքենատրակտորային կայանների մեծ մասի ֆինանսական-տնտեսական դրությունը։

Պլենումը գտնում է, վոր 1934 թվականին կուսակցական, խորհրդային և հողային որգանների հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի ամենորյա սիստեմատիկ աշխատանք կատարել մեքենատրակտորային կայանները տնտեսապես ու ֆինանսապես ամրացնելու, դրանք որինակելի, շահավետ տնտեսություններ դարձնելու համար։

10. Պլենումը գտնում է, վոր մինչև այժմ մեքենատրակտորային կայանները չեն կարողացել ճիշտ կազմակերպել և վարձատրել տրակտորիստների ու տրակտորային բրիգադիրների աշխատանքը։ Տրակտորիստների և բրիգադիրների վորակավորումը մինչև այժմ պատշաճ մակարդակին չի հասցված։

Ցելնելով դրանից, պլենումը պարտավորեցնում է մեքենատրակտորային կայանների դիրեկտորներին ու քաղբաժնի պետերին, մի ամսում կանոնավորել տրակտորիստների ու բրիգա-

ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Ծխախոտ տնկելը և փչացածների փոխարեն լրացուցիչ շիթիլ տնկելն ավարտել սահմանված ժամկետներին (հունիսի 10-ից մինչև 15-ը)։ Գործադրել ծխախոտի բերքատվության բարձրացման բոլոր ագրոձեռնարկումները՝ ետելը, ծաղիկների կտրելը, քաղհանը՝ առաջինը տնկելուց 8—10 որից հետո, յերկրորդ քաղհանը՝ առաջինից յերկու շաբաթ հետո և յերրորդ քաղհանը՝ խոտակալած հողամասերում, ինչպես և վոռոգումը, վոռոգելի ծխախոտագործության շրջաններում։

Հատուկ ուշադրություն նվիրել ծխախոտի բերքահավաքի նախապատրաստական աշխատանքին, ժամանակին ապահովելով շրջանները ծխախոտի տերևները շարելու թելով։

Ծխախոտի նոր չորանոցների կառուցումը և գոյություն ունեցող չորանոցների ու ֆերմենտացիոն գործարանների նորոգումն ավարտել ամենաուշը մինչև հուլիսի մեկը։

ՀԱՑԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Բոլոր շրջաններում կատարել խոտակալած ցանքերի պարտադիր քաղհանը ձեռքով և գարնանացան հասկավոր ցանքերինը՝ ցողունավորվելուց առաջ։ Առնվազն յերկու անգամ փոցխել յեգիպտացորենը և բուկ տալ։ Հացահատիկայինների բերքահավաքն ավարտել՝ ցորենը 8—10 որում, վարսակի և գարու բերքահավաքը՝ 10—12 որում։ Փափուկ ցորենի թափվող տեսակների բերքահավաքն սկսել ժամային հասունության ստուգմանում։ Ամենուրեք մտցնել հասկերը ձեռքով հավաքելը, կապելն ու դիզելը կալում, սիստեմատիկ վերահսկողություն հաստատել կալսիչների աշխատանքի վրա և սխտահանել շտեմարանները։

Կազմակերպել դաշտերի, կալերի և շտեմարանների պահպանումը գողություններից ու հրդեհներից, ներգրավելով այդ գործին կոմյերիտական ու պիոներական կազմակերպությունները (պահակներ, պոստեր)։ Խոտի հնձումն ամենուրեք ավարտել նախքան այդ շրջաններում հացաբույսերի բերքահավաքն սկսվելը։

Առաջին հերթին պետությանը հացահատիկ հանձնելու պարտականությունը կատարելուց հետո, ապահովել սերմացվի ու ապահովագրական ֆոնդերի ժամանակին ստեղծումը՝ 1934 թ. աշնանացանի և 1935 թվի գարնանացանի համար։

ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Առանձնացնել անցյալ տարիների լյուցերնի ցանքի տարածություններից լավագույն 1900 հեկտար և, դաշտում ստուգելուց հետո, թողնել այդ ցանքերը վորպես սերմացու, պահպանելով անասուններից, թույլ չտալով հնձել խոտի համար։

Ավարտել նաև բոլոր սերմացուների ցանքերի դաշտային ստուգումը։ Զանազան կատեգորիաներին ու տեսակներին պատկանող ցանքերի բերքահավաքը կատարել առանձին-առանձին՝ թույլ չտալով, վոր դրանք, բերքը հավաքելու և պահելու ժամանակ, խառնվեն այլ սերմերի հետ։ Հացաբույսերի բերքահավաքի ժամանակ առանձնացնել լավագույն ցանքերը սերմացվի համար։

9. Պլենումը մատնանշում է, վոր չնայած մեքենատրակտորային կայանները հաջողությամբ են կատարում իրենց արտադրական խնդիրները, այնուամենայնիվ նրանց մեծ մասում մինչև այժմ ել կան խոշորագույն թերություններ՝ անբավարար է տրակտորների և գյուղատնտեսական այլ մեքենաների խնամքն ու տեխնիկական հսկողությունը, ցածր է նորոգման, մանավանդ ընթացիկ նորոգման վորակը, ամենուրեք տեղի յե ունենում վառելանյութի գերամսխում, թույլ է կազմակերպված կոլտնտեսությունների ագրոարտադրական սպասարկումը, վորի շնորհիվ շատ ծանր է մեքենատրակտորային կայանների մեծ մասի ֆինանսական-տնտեսական դրությունը։

Պլենումը գտնում է, վոր 1934 թվականին կուսակցական, խորհրդային և հողային որգանների հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի ամենորյա սիստեմատիկ աշխատանք կատարել մեքենատրակտորային կայանները տնտեսապես ու ֆինանսապես ամրացնելու, դրանք որինակելի, շահավետ տնտեսություններ դարձնելու համար։

10. Պլենումը գտնում է, վոր մինչև այժմ մեքենատրակտորային կայանները չեն կարողացել ճիշտ կազմակերպել և վարձատրել տրակտորիստների ու տրակտորային բրիգադիրների աշխատանքը։ Տրակտորիստների և բրիգադիրների վորակավորումը մինչև այժմ պատշաճ մակարդակին չի հասցված։

Ելնելով դրանից, պլենումը պարտավորեցնում է մեքենատրակտորային կայանների դիրեկտորներին ու քաղբաժնի պետերին, մի ամսում կանոնավորել տրակտորիստների ու բրիգա-

դիրների աշխատանքի վարձատրության կազմակերպումը, բարելավել նրանց կուլտուրական-կենցաղային սպասարկումը, պատշաճ բարձրության հասցնել նրանց մեջ կատարվող կուսակցական-մասսայական աշխատանքը, ապահովել տրակտորիստների և տրակտորային բրիգադիրների վերաբերյալ այն կանոնադրության կենսագործումը, որը հաստատված է Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի կողմից։

11. Պլենումն արձանագրում է, որ 1933 թ. գյուղատնտեսական ապրանքների մթերումը, չնայած պլանային առաջադրանքների հաջող կատարմանը (բամբակ՝ 102,3 տոկոսով, հացահատիկ՝ 100 տոկոսով, ծխախոտ՝ 106,3 տոկոսով, մրգեղեն՝ 107,5 տոկոսով, ցիտրուսներ՝ 100 տոկոսով), այնուամենայնիվ ուներ չկազմակերպված կողմեր (պատրաստ չեր տեխնիկական բազան, ընդունվել եր կոնդիցիոն պայմաններին չհամապատասխանող մթերք, մթերումներն ապահովված չեյին պահեստարաններով, տարայով, անկանոնություններ կային փոխադրման ասպարիզում և այլն)։

Առաջիկա մթերումներն ավելի լավ կազմակերպելու նպատակով, պլենումն առաջարկում է՝

ԲԱՄԲԱԿԻ ՄԹԵՐՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Անհապաղ ծավալել ծածկերի շինարարությունն ու նորոգումը, ամբողջովին պատրաստելով դրանք ամենաուշը մինչև ոգոստոսի 15-ը, միաժամանակ ապահովելով ամերիկյան բամբակը վերամշակող գործարանների նորոգման ու գործարկման ավարտումը մինչև 1934 թ. սեպտեմբերի մեկը, յեգիպտական բամբակը վերամշակողներինը՝ մինչև սեպտեմբերի 10-ը։ Մինչև ոգոստոսի 15-ն ավարտել բոլոր սերմացուների բամբակի պահեստների ախտահանումը։ Միջոցներ ձեռք առնել պահպանելու և գործածության համար պիտանի դարձնելու ամբողջ տարան (բալդաններները), առաջիկա բամբակի մթերման կամպանիայի համար։

Ժամանակին ավարտել բամբակի գործարանների տերիտորիայում գտնվող ճանապարհների ու կամուրջների և դեպի այդ գործարանները տանող ուղիների նորոգումը, ինչպես և կատարելապես կարգի բերել բամբակի գործարանների ու մթերակայանների բակերը։ Մինչև սեպտեմբերի մեկն ավարտել Ադրբեջանի հետևյալ ճանապարհների ընթացիկ ու հիմնական նորոգումը՝ Թարթար-Մարգուշևան, Կարենդ-Մինդրիետան, Ուջառի-Զարդաբ,

Գյանջա-Ծամուխ։ Ապահովել բամբակի ճիշտ տեսակավորումը դաշտում և միջոցներ ձեռք առնել, որ բամբակը մթերակայաններին հանձնվի սահմանված ստանդարտների համաձայն։

Հանձնարարել Անդրժողկոմխորհին, քննել բամբակի բերքահավաքի համար պարկեր, թել և փոխադրական միջոցներ և այլն մատակարարելու հարցը և բամբակի գործարանների տեխնիկական մատակարարման հարցը։

Պարտավորեցնել բամբակի գործարաններին, մինչև հունիսի 15-ն ավարտել 1933 թ. բերքի բամբակի մշակումը, իսկ հունիսի մեկից ձեռնարկել բամբակի գործարանների նորոգմանը։

Հանձնարարել Ադրբեջանի ժողկոմխորհին իր հատուկ հսկողության տակ վերցնել բամբակի գործարանների նորոգումը։

ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ ՄԹԵՐՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Հանձնարարել հանրապետությունների կենտկոմներին և ժողկոմխորհներին, հունիսի առաջին կեսին ամենուրեք ստուգման յենթարկել, թե ինչ չափով պատրաստ են հացահատիկ մթերող միավորման, սպառողական կոոպերացիայի և բամբակամթեր տրեստի մթերակայանները հացահատիկի նոր բերքն ընդունելու, ինչ չափով ապահովված են մթերակայանները կշիռներով, լաբորատորական ինվենտարով, շրջանառության տարայով և բրեզենտներով։

Խնամքով ստուգել մթերակայաններում աշխատողների կազմը, մաքրել հացահատիկ ընդունող ապարատը խորթ տարրերից, վերացնելով հացահատիկ գողանալու, կշռելու գործում հացահատիկ հանձնողներին խաբելու ամեն մի հնարավորություն։

Ապահովել հացահատիկ հանձնողների կուլտուրական-կենցաղային սպասարկումը մթերակայաններում, կազմակերպելով կարմիր անկյուններ, ճաշարաններ, թեյարաններ և անասուններին ջրելու ավազաններ ու տաշտակներ։

Անդրյերկոմի պլենումը գտնում է, որ գյուղատնտեսական մյուս բոլոր ապրանքների մթերման ասպարիզում (ծխախոտ, բանջարեղեն, պտուղ և այլն), պետք է հատուկ ուշադրություն նվիրել մթերող կայանների համար տեխնիկական բազա, տարա ու տրանսպորտ պատրաստելու հարցերին, ինչպես և մթերող սիստեմի համար կատարել կադրերի այնպիսի ընտրություն, որոնք կարող են ժամանակին և բարձր վորակով կատարել մթերման պլանները, անվթար պահպանել մթերված ապրանքը։ Մթերող որգանների բոլոր աշխատողները պետք է ստուգման յենթարկվեն ատեստացիոն հանձնաժողովներում և հաստատվեն համապա-

տասխան կուսակցական ու խորհրդային որգանների կողմից։

12. Համ Կ(բ)Կ Անդրյերկոմի պլենումը մատնանշում է, վոր չնայած զգալի ժամանակ է անցել Համ Կ(բ)Կ-ի 17-րդ համագումարից հետո և ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի ու Ժողկոմխորհի հողային որգանների վերակառուցմանը վերաբերյալ վորոշումն ընդունվելուց հետո, այդ վերակառուցումը մինչև այժմ էլ չի ավարտվել, մանավանդ շրջանային հողային բաժիններում և մեքենատրակտորային կայաններում։ Պլենումն առաջարկում է հանրապետությունների կենտկոմներին ու ժողկոմխորհներին, շրջկոմներին և մեքենատրակտորային կայանների քաղբաժիններին՝ ամենակարճ ժամանակամիջոցում ավարտել հիշյալ որգանների վերակառուցումը կառավարության վորոշումների հիման վրա, ամրացնել նրանց կադրերը, բարելավել հողային որգանների աշխատանքի սիստեմն ու մեթոդները, վերացնելով ղեկավարության գրասենեկային-բյուրոկրատիկ մեթոդները։ Հատուկ ուշադրություն նվիրել ագրոկազմի աշխատանքի պայմանների բարելավմանը (բնակարաններ, փոխադրական միջոցներ, աշխատավարձի ժամանակին վճարումը, մասնագետների ճիշտ ոգտագործումը, նրանց վերապատրաստումը և այլն)։ Գյուղատնտեսության ազնիվ մասնագետները պետք է շրջապատված լինեն խորհրդային ու կուսակցական կազմակերպությունների հոգատարությամբ և ուշադրությամբ։

Պլենումը գտնում է, վոր գյուղատնտեսության 1934 թ. արտադրական պլանի կատարումը և բերքատվության բարձրացումը այժմ ամբողջովին կախված է քաղհանի, մշակման, բերքահավաքի և մթերման աշխատանքի հաջող կատարումից։ Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները շրջաններում, կոլտնտեսություններում, կոլտնտեսականների մեջ, մենատնտեսների մեջ, խորհտնտեսությունների բանվորների մեջ, այդ խնդրի շուրջը պետք է ծավալեն կազմակերպչական, մասսայական-քաղաքական աշխատանք և սոցիալիստական մրցություն՝ մշակումն ու բերքահավաքը լավագույն կերպով կատարելու համար։

Պլենումը կոչ է անում Անդրկովկասի բոլշևիկներին, որինակելի կերպով կազմակերպել մշակման, բերքահավաքի ու մթերման աշխատանքը և այդ հիման վրա նորանոր հաջողություններ ձեռք բերել ԱՍՖՍՀ-ի գյուղատնտեսությունը բարձրացնելու և Անդրկովկասի կոլտնտեսությունները բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներին ունևոր դարձնելու ուղղությամբ։

ՀԱՅԿՈՒՍ ԿՈՄՍՄՈԼ
Гос. Публ. Библиотека
ՀԱՅԱՍ - ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Թարգմ. խմբագիր՝ Գ. Իսահակյան
Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Հանձնված է արտադրության 1934 թ. հունիսի 7-ին
Ստորագրված է տպագրելու 1934 թ. հունիսի 9-ին
Թույլատրված է գլավլիտի լիազոր № 265
Հրատ. № 112, տիրաժ 3000, Պատվեր № 402

ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

402

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

ОБ ИТОГАХ ВЕСЕННЕГО СЕВА

и задачах прополочно-обработочной, уборочной и заготовительной кампаний

Постановление пленума ЗКК ВКП (б)

Сельхозгиз 1934 Эривань

29. 864